


**Խումբ 1.**
**«Քննադատական հետադարձ կապը»**

**Իրավիճակ;** Ուսուցիչը ամբողջ դասարանի առջև քննադատում է Արշակի անհատական աշխատանքը նախագծի շուրջ, որտեղ նա ներկայացրել էր հենց իր տեսակետը պատմության մեկ դրվագի վերաբերյալ: Արշակը վիրավորվում է ու ամաչում, ախր ամբողջ դասարանը հիմա կծիծաղի իր վրա:

**Հաղորդակցման պասիվ ոճ;** Արշակը լռում է՝ մտածելով, որ ավելի լավ է մյուս անգամ այլևս իր մտքերը չարտահայտի:

**Դու-արտահայտություն;** «Դուք ճիշտ եք, ինձ մոտ լավ չի ստացվել»:




**Խումբ 1.**
**«Քննադատական հետադարձ կապը»**

**Իրավիճակ;** Ուսուցիչը ամբողջ դասարանի առջև քննադատում է Արշակի անհատական աշխատանքը նախագծի շուրջ, որտեղ նա ներկայացրել էր հենց իր տեսակետը պատմության մեկ դրվագի վերաբերյալ: Արշակը վիրավորվում է ու ամաչում, ախր ամբողջ դասարանը հիմա կծիծաղի իր վրա:

**Հաղորդակցման ագրեսիվ ոճ**; Արշակը խիստ վիրավորվելով՝ փորձում է պաշտպանել իր տեսակտը:

**Դու- արտահայտություն;** «Դուք տրամադրված եք իմ դեմ, միշտ քննադատում եք իմ ասածները»:




**Խումբ 1.**
**«Քննադատական հետադարձ կապը»**

**Իրավիճակ;** Ուսուցիչը ամբողջ դասարանի առջև քննադատում է Արշակի անհատական աշխատանքը նախագծի շուրջ, որտեղ նա ներկայացրել էր հենց իր տեսակետը պատմության մեկ դրվագի վերաբերյալ: Արշակը վիրավորվում է ու ամաչում, ախր ամբողջ դասարանը հիմա կծիծաղի իր վրա:

**Հաղորդակցման պասիվ-ագրեսիվ ոճ;** Արշակը ներսում բարկանում ու վիրավորվում է, աչքերը պտտելով ասում՝

**Դու- արտահայտություն;** «Դուք ճիշտ եք, մյուս անգամ ավելի *շատ ջանք կթափեմ, որ ձեզ գոհացնեմ*»:



**Խումբ 1.**
**«Քննադատական հետադարձ կապը»**

**Իրավիճակ;** Ուսուցիչը ամբողջ դասարանի առջև քննադատում է Արշակի անհատական աշխատանքը նախագծի շուրջ, որտեղ նա ներկայացրել էր հենց իր տեսակետը պատմության մեկ դրվագի վերաբերյալ: Արշակը վիրավորվում է ու ամաչում, ախր ամբողջ դասարանը հիմա կծիծաղի իր վրա:

**Հաղորդակցման հաստատակամ ոճ**; Արշակը թեև վիրավորվում է, փորձում է հստակ արտահայտել իր կարծիքը:

**Ես- արտահայտություն;** «…»:




**Խումբ 2.**
**«Դպրոցական նախագիծ»**

**Իրավիճակ**; 4 աշակերտներից բաղկացած խումբը աշխատում է դպրոցական նախագծի վրա, բայց ստացվել է այնպես, որ աշխատանքի մեծ մասը անում է Անահիտը: Նա հոգնել է դրանից ու նյարդայնանում է իր ընկերների անգործության ու անպատասխանատվության վրա:

**Հաղորդակցման պասիվ ոճ**; Անահիտը լռում է՝ մտածելով, որ չի ուզում կոնֆլիկտ ստեղծել, հերթական հանդիպման ժամանակ ասում է;

**Դու- արտահայտություն;** «Դուք երևի հիմա զբաղված եք ու չեք հասցնում ինձ օգնել, ես գրեթե ամեն ինչ արել եմ արդեն»:




**Խումբ 2.**
**«Դպրոցական նախագիծ»**

**Իրավիճակ**; 4 աշակերտներից բաղկացած խումբը աշխատում է դպրոցական նախագծի վրա, բայց ստացվել է այնպես, որ աշխատանքի մեծ մասը անում է Անահիտը: Նա հոգնել է դրանից ու նյարդայնանում է իր ընկերների անգործության ու անպատասխանատվության վրա:

**Հաղորդակցման ագրեսիվ ոճ**; Հերթական հանդիպման ժամանակ Անահիտը բղավում է իր դասընկերների վրա:

**Դու-արտահայտություն**; «Դուք երբեք բան չեք անում, ծույլ ու անպատասխանատու եք, ամեն ինչ իմ ուսերին է»:




**Խումբ 2.**
**«Դպրոցական նախագիծ»**

**Իրավիճակ**; 4 աշակերտներից բաղկացած խումբը աշխատում է դպրոցական նախագծի վրա, բայց ստացվել է այնպես, որ աշխատանքի մեծ մասը անում է Անահիտը: Նա հոգնել է դրանից ու նյարդայնանում է իր ընկերների անգործության ու անպատասխանատվության վրա:

**Հաղորդակցման պասիվ-ագրեսիվ ոճ**; հերթական հանդիպման ժամանակ Անահիտը, փնչացնելով քթի տակ, հեգնական ձայնով հասկացնում է, որ նրանց վարքն իրեն դուր չի գալիս:

**Դու-արտահայտություն**; «Մի անհանգստացեք, ես աշխատանքի *ձեր բաժինն* էլ եմ արդեն արել, *ինչպես միշտ*»:



**Խումբ 2.**
**«Դպրոցական նախագիծ»**

**Իրավիճակ**; 4 աշակերտներից բաղկացած խումբը աշխատում է դպրոցական նախագծի վրա, բայց ստացվել է այնպես, որ աշխատանքի մեծ մասը անում է Անահիտը: Նա հոգնել է դրանից ու նյարդայնանում է իր ընկերների անգործության ու անպատասխանատվության վրա:

**Հաղորդակցման հաստատակամ ոճ**; հերթական հանդիպման ժամանակ Անահիտը հստակ ու հասկանալի կերպով արտահայտում է իր տեսակետը և կարիքը:

**Ես-արտահայտություն**; «...»:




**Խումբ 3.**
**«Ընկերությունն ու հաղորդագրությունները»**

**Իրավիճակ**; Արդեն 3 օր է, ինչ Աննան չի պատասխանում Ռուբենի հեռախոսային հաղորդագրություններին ու զանգերին: Ռուբենը գիտի, որ դա իրենց փոքր վեճի արդյունքն է և կամաց-կամաց սկսում է վրդովվել ու բարկանալ:

**Հաղորդակցման պասիվ ոճ**; Ռուբենը չի գրում և չի զանգում Աննային՝ մտածելով, որ երբ դպրոցում իրար հանդիպեն, գուցե ստացվի միմյանց հետ խոսել:

**Դու-արտահայտություն**; «Դու երևի զբաղված ես, չէի ուզում քեզ անհանգստացնել»:




**Խումբ 3.**
**«Ընկերությունն ու հաղորդագրությունները»**

**Իրավիճակ**; Արդեն 3 օր է, ինչ Աննան չի պատասխանում Ռուբենի հեռախոսային հաղորդագրություններին ու զանգերին: Ռուբենը գիտի, որ դա իրենց փոքր վեճի արդյունքն է և կամաց-կամաց սկսում է վրդովվել ու բարկանալ:

**Հաղորդակցման ագրեսիվ ոճ**; Ռուբենը զայրացած գնում է Աննայի մոտ և խոսքերով հարձակվում նրա վրա:

**Դու-արտահայտություն**; «Այնքան եսասեր ես, քեզ այնպես ես պահում կարծես քեզնից բացի էլ ուրիշ մարդ չկա»:




**Խումբ 3.**
**«Ընկերությունն ու հաղորդագրությունները»**

**Իրավիճակ**; Արդեն 3 օր է, ինչ Աննան չի պատասխանում Ռուբենի հեռախոսային հաղորդագրություններին ու զանգերին: Ռուբենը գիտի, որ դա իրենց փոքր վեճի արդյունքն է և կամաց-կամաց սկսում է վրդովվել ու բարկանալ:

**Հաղորդակցման պասիվ-ագրեսիվ ոճ**; Ռուբենը զայրանում է և հետևյալ բովանդակությամբ մեկ հաղորդագրություն գրում՝

**Դու-արտահայտություն**; «Հասկանում եմ, որ *շատ զբաղված ես, ինչքան քեզ պետք է, այնքան կպասեմ*»:



**Խումբ 3.**
**«Ընկերությունն ու հաղորդագրությունները»**

**Իրավիճակ**; Արդեն 3 օր է, ինչ Աննան չի պատասխանում Ռուբենի հեռախոսային հաղորդագրություններին ու զանգերին: Ռուբենը գիտի, որ դա իրենց փոքր վեճի արդյունքն է և կամաց-կամաց սկսում է վրդովվել ու բարկանալ:

**Հաղորդակցման հաստատակամ ոճ**; Ռուբենը որոշում է հանդիպել Աննային ու պարզաբանել ստեղծված իրավիճակը:

**Ես-արտահայտություն**; «…»:




**Խումբ 4.**
**«Ընտանեկան պատասխանատվություն»**

**Իրավիճակը**; Արմենի փոքր եղբայրը թափթված է թողնում իրենց սենյակը ամեն անգամ, երբ գնում է իր մարզումներին: Արմենը կարգուկանոնի սիրահար է և հոգնել է եղբոր ետևից սենյակն ամեն օր հավաքելուց:

**Հաղորդակցման պասիվ ոճ**; Արմենը հիմնականում լռում է, երբեմն բողոքելով իրենց մայրիկին, մտքում մտածում է, որ եղբայրը լավ մարզիկ դառնալու շանս ունի, և սա կռվի առիթ չէ:

**Դու- արտահայտություն;** «Դու երևի չես էլ նկատում, որ հագուստդ ու իրերդ թափթված են սենյակով մեկ»:




**Խումբ 4.**
**«Ընտանեկան պատասխանատվություն»**

**Իրավիճակը**; Արմենի փոքր եղբայրը թափթված է թողնում իրենց սենյակը ամեն անգամ, երբ գնում է իր մարզումներին: Արմենը կարգուկանոնի սիրահար է և հոգնել է եղբոր ետևից սենյակն ամեն օր հավաքելուց:

**Հաղորդակցման ագրեսիվ ոճ**; Արմենը հավաքում է եղբոր իրերը և գցում պատուհանից դուրս:

**Դու- արտահայտություն;** «Դու խոզ ես, քո հետևից ինքդ հավաքիր»:




**Խումբ 4.**
**«Ընտանեկան պատասխանատվություն»**

**Իրավիճակը**; Արմենի փոքր եղբայրը թափթված է թողնում իրենց սենյակը ամեն անգամ, երբ գնում է իր մարզումներին: Արմենը կարգուկանոնի սիրահար է և հոգնել է եղբոր ետևից սենյակն ամեն օր հավաքելուց:

**Հաղորդակցման պասիվ-ագրեսիվ ոճ**; Արմենը արհամարհական ժպտում է:

**Դու- արտահայտություն**; «Վայ, դու երևի *մոռացել ես*, որ այս սենյակը *միայն քոնը չէ*»:



**Խումբ 4.**
**«Ընտանեկան պատասխանատվություն»**

**Իրավիճակը**; Արմենի փոքր եղբայրը թափթված է թողնում իրենց սենյակը ամեն անգամ, երբ գնում է իր մարզումներին: Արմենը կարգուկանոնի սիրահար է և հոգնել է եղբոր ետևից սենյակն ամեն օր հավաքելուց:

**Հաղորդակցման հաստատակամ ոճ**; Արմենը համբերատար և հանգիստ խոսում է իր եղբոր հետ:

**Ես- արտահայտություն**; «...»: